ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 13-Լ

«16» 01 2024 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 8-Ի N 54 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի N 39 հրամանում լրացում կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 9-ի N 2-Լ հրամանը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության դատախազությունում՝ «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության վարման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 54 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հավելվածի N 2-ի 7-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Գլխավոր դատախազության **սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունը՝** հաշվետվության ձևի **1-3-րդ, 5-րդ և 7-14-րդ բաժինները,** իսկ անհրաժեշտության դեպքում լրացնում է նաև իրեն չվերապահված բնագավառի՝ հաշվետվության ձևի համապատասխան բաժինը (բաժինները)»,

2) Հավելվածի N 2-ի 7-րդ կետի 8-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել,

3) Հավելվածի N 4-ի 7-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Գլխավոր դատախազության **սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունը՝** հաշվետվության ձևի **1-3-րդ, 5-րդ և 7-15-րդ բաժինները,** իսկ անհրաժեշտության դեպքում լրացնում է նաև իրեն չվերապահված բնագավառի՝ հաշվետվության ձևի համապատասխան բաժինը (բաժինները)»,

4) Հավելվածի N 4-ի 7-րդ կետի 8-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**